

Գլուխ մ¹ալ նուիրուած է Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ արձանագրութիւններուն ու յիշատակարաններուն:

Ս. Լուսաւորիչ եկեղեցին շատո՛նց ունենալու էր այդպիսի ամփոփում մը, ինչպէս նաեւ մեր ուրիշ բոլոր հին եկեղեցիներ ու հաստատութիւններ: Դժբախտաբար ամբողջ շին իմ ամփոփածները այս գլխին մէջ: Ասոնք՝ այնպէս կը կարծեմ որ թափթփած մասերն են այն ծոխ արձանագրութիւններուն ու յիշատակարաններուն, զորս հաստատապէս ունէր Պոլսի այս հնագոյն եկեղեցին, կենդրոնը հարուստներուն ու աղքատներուն, վաճառականներուն ու բեռնակիրներուն եւ այլն, եւ այլն: Հրդեհները շատ քան լափած են հաւանաբար թէ ծնողներէն եւ թէ արձանագրութիւններէն: Եփնութիւններու եւ նորոգութիւններու ատեն եղած կորուստներն ալ քիչ չեն: Թո՛ղ այն անհոգութիւնը, որ փժացուցած է քաղմութիւ խաչքարեր ու պարզ արձանագրութիւններ: Ո՛ գիտէ, ինչ թանկագին տեղեկութիւններէ ու թուականներէ զրկուած է պատմութիւնը, ամէն տեղ տիրող սարսափելի անհոգութիւններու արդիւնքով:¹

1904, Փետր. 14, Կ.Պոլիս

Բ. Վ.

Ս. Լուսաւորիչ-Ղալաթիա:

¹ Ինչպէս որ արձանագրեցինք (էջ 116, ծան. 1)՝ Ս. Լուսաւորչի վերաբերեալ խաչքարներուն եւ ուրիշ քար-յիշատակարաններու մագորդները գետեղուեցան Ս. Հրեշտակապետի մատրան հիւսիսային պատին վրայ, ներքին կողմէն, 1903 Յունվար ամսուն մէջ, Պտ. Խնամակալութեան ջանքով: Մուրատեան Յովհաննէս էֆ. մասնաւոր աշխատանք ունեցաւ այդ գետեղումներու համար: